ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Օգոստոս 3. թ. 1804։ Առաջադրուեց Սինոդին Երեւանի թեմ. դպրանոցի ընթացաւարտ Յակովբ Յակոբեանին, որ մի քանի տարի ուսուցիչ է եղել, իւր խնդրի համեմատ, ընդունել Մայր Աթոռի միաբանութեան շարքում։

Սոյն Սրբազան կաթուղիկոսի միջնորդութեան ի պատասխանի գրուեց, թէ Տ. Մուշեղ եպիսկոպոսը չի կարող պաշտօնավարել Ամերիկայի հայոց մէջ, որը Ս. Էջմիածնի տէրունի թեմ է։

Օգոստոս 8. թ. 1813. Առաջադրուեց Տ. Յուսիկ արքեպիսկոպոսին Մայր Աթոռի նոր միաբան Յակովբ Յակովբեանին սարկաւագ ձեռնադրել։

Օգոստոս 10. թ. 1814. Առաջադրութեամբ յայտնուեց Սինոդին թէ նոր միաբան Յակովբ Յակովբեանցը նոյն ամսի 9-ին Ս. Գայիանէի վանքում Տ. Յուսիկ արքեպիսկոպոսից սարկաւագ է ձեռնադրուել։

Օգոստոս 10. թ. 1814. Յայտնուեց Վանայ առաջնորդական տեղապահ Տ. Յովսէփ արքեպիսկոպոս Սառաջանեանին, թէ Սուխումում վախճանուած տաճկաստանցի Վարդանը ժառանգութիւն չէ թողել։

Օգոստոս 12. թ. 1830. Առաջադրուեց Շուշւոյ կոնսիստորիայի Նախագահող Տ. Զաւէն վարդապետին յայտնել, թէ ծխական դպրոցների համար կարդուելիք թեմական տեսչի ռոճիկը ինչ աղբիւրներից պէտք է հոգացուի։

Օգոստոս 15. թ. 1833. Առաջադրութեամբ յայտնուեց Ալէքսանդրոպոլի փոխանորդ Տ. Ընձակ վարդապետին, թէ վանահայր ընտրում է առաջնորդը և հաստատում Վեհ. Հայրապետը, իսկ Հայրապետական աթոռի թափուր ժամանակ, Նորին Սրբութեան Տեղակալը։

Օգոստոս 19. թ. 1850. Յիշեցնելով հանդերձ, որ եկեղեցի օծելը եպիսկոպոսի է վերապահուած, առաջադրուեց Տ. Եփրեմ եպիսկոպոսին ստանալ Ախալքալաքի գործակալից և մատուցանել բացատրութիւն Զանկ գիւղի եկեղեցու օծման մասին։

Օգոստոս 25. թ. 1879. Օրհնութեան թուղթ Բաքուաբնակ պ. Նիկողայոս Մարտիրոսեան Առաքելեանի անունով, որ ուղարկելով նախագիծ խոստանում է իւր ծախքով, մօտ 40 հազար ռուբլիով, կառուցանել Բաքու քաղաքում առաջնորդարան Ս. Լուսաւորիչ եկեղեցու բակում։

Օգոստոս 27. թ. 1889. Թուղթ Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքի Սրբազան Տեղապահին, որով յայտնուեց Տ. Մուշեղ եպիսկոպոսի եկեղեցական օրէնքին և կանոններին հակառակ վարմունքը իւր վիճակը չեղող թեմում ինքնակամ եկեղեցի օծելով և կիսատարկաւագներ ձեռնադրելով, և խնդրուեց միջոցներ ձեռք առնել վերջ տալու այս ապօրինութիւններին։

Օգոստոս 27. թ. 1890. Առաջադրուեց Ամերիկայի Հայաստանեայց առաքելական եկեղեցու հոգաբարձութեանը ստանալ պ. Այվատից եկեղեցու ամենատեսակ գոյքերը կամ պահել իւր հսկողութեան տակ և կամ յանձնել Առաջնորդական փոխանորդին պահելու։

Օգոստոս 27. թ. 1893. Յայտնուեց Սինոդին թէ Ռուբէն աբեղայ Մանասեանը, որ նշանակուած է Ճեմարանի երաժշտութեան ուսուցիչ, իւր հրաժարականի համար արձակուեց Տպարանի վարչութեան անդամութիւնից և նրա տեղը նշանակուեց Յակոբ սարկաւագը, և առաջադրուեց, հարկաւոր կարգադրութիւնն անել։ Թ. 1894. այս մասին տեղեկութիւն տրուեց և Տպարանի վարչութեան նախագահ Տ. Մատթէոս վարդապետին։

Օգոստոս 29. թ. 1900. Առաջադրութեամբ թոյլ տրուեց Ատրպատականի առաջնորդին Կուբանեան շրջանի Տիբէկ ագարակում երկու սեռի մանուկների համար եկեղ.-ծխ. դպրոց բանալ։

Օգոստոս 29. թ. 1901. Մակագրութեամբ պատուիրուեց Սուրմալուայ գաւառի գործակալին յայտնելու Ինջա գիւղացի Յովսէփ Յակոբեանին, թէ օտարահպատակ հայերի ամուսնալուծական գործերը վերապահուած են ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին։

Օգոստոս 31. թ. 1903. Առաջադրուեց Տ. Եփրեմ եպիսկոպոսին տեղեկութիւն տալ նպաստամատոյց Յանձնաժողովի գանձապահ պ. Ա. Մելիք—Ազարեանի մօտ գտնուած 75,253 ռ. 64 կ. գումարի մասին,

—⁂—

ՔԱՂՈՒԱԾ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Օգոստոս 1. թ. 531. Սինոդը լսեց Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի սոյն 1911 թ. Յունվարի 22-ի № 196 յայտարարութիւնը Քութայիսի ծխատէր Աշոտ քահանայ Տէր Իսրայէլեանցի գործակալական պաշտօնի մէջ անփոյթ գտնուելու մասին և նոյն քաղաքի Գէորգ քահանայ Սողլաղեանի իւր պաշտօնին անհամապատասխան ընթացքի մասին. որոշեց. Գէորգ քահանայ Սողլաղեանցին արձակել գործակալութեան և Քութայիսի ժողովրդեան հովուի պաշտօնից և վերադարձնել իւր նախկին պաշտօնատեղին՝ Նիշպէս գիւղը, որի վրայ ձեռնադրուած է. իսկ Աշոտ քահանայ Տէր Իսրայէլեանցին դադարացնել քահանայագործութիւնից մինչև իւր վերայ մնացած գործակալական հաշիւները վերջացնելը, պատուիրելով կոնսիստորիային մինչև այդ մի այլ քահանայ նշանակել Քութայիսի հայ ժողովրդեան հովուելու համար։

Օգոստոս 5. թ. 537. Սինոդը լսեց Երևանցի Յակովբ Յակովբեանի այս տարուայ օգոստոսի 2-ի Ամենապատիւ Տ. Տեղակալի անունով ներկայացրած խնդիրը Մայր Աթոռի կուսակրօն միաբանութեան շարքը ընդունուելու մասին. որոշեց. Յակովբ Յակովբեանին ընդունել հոգևոր կոչման մէջ իբրև անդամ Մայր Աթոռի կուսակրօն միաբանութեան։ Այդ մասին յայտնել իրան Յակով-